Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

352(47.925)
Հ-94

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Հ. Ս. Խ. Հ.

1. ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.
2. ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.
3. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

352(47.925)
Հ-194

11 MAR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

Հ. Ս. Խ Հ.

1. ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։
2. ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ։
3. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴՐՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ։

1003
13840

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. ԸՆԹԱՑԱՎԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ
7/II-1922
Ա. ՍՅԱՄԱՆԻ

14 JUN 2013

ՀԱՅՊԵՏՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 741 (բ) Պատվ. 4229. Տիրաժ. 5000

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հաստատված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից 1926 թ. մայիսի 25-ին)

Ի զարգացումն 1925 թ. մարտի 16-ին հաստատված «Գյուղական Խորհուրդների կանոնադրության» (Հ. Ս. Խ. Հ. Բ. Գ. Կառ. Ող. և Կարգ. Ժողովածու, 1925 թ. № 9, հոդ. 57) 22-26 հոդվածների Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը վորոշում է հաստատել հետևյալ

ՀՐԱՀԱՆԳԸ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՏՎԱԾ Ա-ԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Գյուղական Խորհուրդների գործունեության հիմնական խնդիրներն են. բարձրացնել գյուղացիների տնտեսությունը, պայքարել անգրագիտության, հիվանդությունների և գյուղական կյանքի այլ թերությունների դեմ, պաշտպանել աշխատավոր բնակչության իրավունքները բանվորների և գյուղացիների դաշինքի հիման վրա, ճշտությամբ և անթերի ի կատար ածել բանվորա-գյուղացիական կառավարության որենքները, յոյն չափե-

բով գրավել գյուղացիներին և գեղջկուհիներին խորհրդային շինարարության, պետություն կառավարելու, պետական ապարատը բարելավելու գործի մեջ և այլն:

2· Գյուղական Խորհրդի անդամները, վորպես գյուղի աշխատավորների լայն մասսաների ներկայացուցիչներ, մասնակցելով Խորհրդի և նրա սեկցիաների աշխատանքին՝ պետք է ամեն կերպ ձգտեն իրագործելու Գյուղական Խորհրդին վերապահված խնդիրները, անխզելի կապ պահպանելով ընտրողների և գյուղական հասարակական կազմակերպությունների հետ և վայելելով «Գյուղական Խորհուրդների կանոնադրությամբ» և սույն հրահանգով նախատեսված իրավունքներն ու կատարելով նրանցով նախատեսված պարտականությունները:

ՀԱՏՎԱԾ 2-ՐԴ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՆՐԱ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

3· Գյուղական Խորհրդի անդամները պարտավոր են ներկա լինել Խորհրդի բոլոր նիստերին և գործոն մասնակցություն ունենալ նրա աշխատանքներում:

4· Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջարկություններ անելու Խորհրդին՝ նրա տեսչության վերաբերյալ բոլոր խնդիրների առթիվ:

5· Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր առանձին կարծիքն հայտնելու Խորհրդի ամեն մի վորոշման առթիվ և պահանջելու, վոր իր առանձին կարծիքը մուծվի Խորհրդի նիստի արձանագրության մեջ:

6· Գյուղական Խորհրդի անդամները պարտավոր են կատարել Խորհրդի կամ նրա նախագահության հանձնարարություններն այն գյուղերում, վորտեղ Խորհուրդ կա:

7· Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է առնվազն Խորհրդի մի սեկցիայի անդամ և գործոն աշխատակից լինել:

8· Խորհրդի յուրաքանչյուր անդամ ինքն իր հաժար կամքովն ընտրում է այն սեկցիան, վորտեղ կամենում է աշխատել: Յուրաքանչյուր սեկցիայի կազմը հաստատում է Գյուղական Խորհուրդը, վոր կարող է Խորհրդի անդամների վերաբաշխումն անել ըստ սեկցիաների՝ գործնական պահանջների համեմատ:

9· Սեկցիայի անդամի մի սեկցիայից մյուսը փոխվելը տեղի յե ունենում Գյուղական Խորհրդի կամ նրա նախագահության վորոշմամբ:

10· Գյուղական Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է մասնակցել վճռական ձայնի իրավունքով Գյուղական Խորհրդի մի քանի սեկցիաների աշխատանքներին, յեթե սեկցիայի անդամ է նշանակված Խորհրդի կամ նրա նախագահության վորոշմամբ:

11· Գյուղական Խորհրդի սեկցիաների անդամները պարտավոր են գործոն մասնակցություն ունենալ այն սեկցիաների աշխատանքներում, վորոնց անդամն են իրենք, հաճախելով սեկցիայի բոլոր նիստերին և կատարելով նրանց հանձնարարությունները:

12· Գյուղական Խորհուրդների անդամներն իրավունք ունին հանդես գալու Խորհրդի անունից միայն այն դեպքում, յեթե այդ մասին լիազորություն ունին Խորհրդից կամ նրա նախագահությունից, իսկ սեկցիայի անունից միայն այն դեպքում, յեթե լիազորություն ունին սեկցիայից կամ նրա նախագահից:

13· Քննություններ և Գյուղական Խորհրդի կամ նրա նախագահության այլ հանձնարարությունները կատարելիս Խորհրդի անդամներն իրավունք չունին միջամտելու իրենց հետազոտելիք հիմնարկությունների ու կազմակերպությունների գործառնական կառավարչությանը և վոչ մի կարգադրություն անելու իրավունք չունին վո՛չ իրենց և վո՛չ Խորհրդի անունից, տեղեկություն տալով Խորհրդին կամ նրա նախագահությանը հետազոտության արդյունքի մասին:

14· Խորհրդի կամ նրա նախագահության հանձնարարությամբ քննություն կատարելիս Խորհրդի անդամներն իրավունք ունեն ներկա լինելու իրենց հետազոտելիք հիմնարկությունների և ձեռնարկությունների աշխատանքների ժամանակ և անհրաժեշտ դեպքերում տեղեկություններ ու պարզաբանություններ պահանջելու տրենքով թույլատրված կարգով ու սահմաններում, այդ հիմնար-

կությունների և ձեռնարկություններից, բացի գաղտնի բնույթ ունեցող տեղեկություններից։

15. Ցերեք անգամ առանց հարգելի պատճառների Գյուղական Խորհրդի նիստերից բացակայելու, ինչպես նաև Խորհրդի անդամի այլ պարտականությունները չկատարելու համար Խորհրդի անդամները Գյուղական Խորհրդի վորոշմամբ կարող են յենթարկվել կարգապահական պատժի—այն է՝ նկատողության և հանդիմանության։

16. Գյուղական Խորհրդի հանձնարարությամբ մշտական կամ ժամանակավոր պարտականություններ կատարող անդամները իրենց պարտականությունները չկատարելու, գեղծումների, իշխանազանցության և այլ հանցագործությունների համար պատասխանատվության են յենթարկվում որենքով սահմանված կարգով։

17. Գյուղական Խորհրդի կողմից այս կամ այն անդամին հեռացնելը կարող է տեղի ունենալ միայն Գյուղական Խորհրդի վորոշմամբ և գավառակային գործադիր կոմիտեի հաստատությամբ՝

ա) Յեթե նրան հեռացնել է պահանջում ավյալ Խորհրդի բնակչների մեծամասնությունը.

բ) Յեթե նա կորցնում է իր բնակական իրավունքները.

գ) Գյուղական Խորհրդի անդամների ընդհանուր թվի յերկու յերրորդի վորոշմամբ և Գյուղհասարակական ժողովի հաստատությամբ։

Ծանոթություն.—Այն հոդվածի «գ» կետի կարգով Խորհրդի անդամությունից հեռացնելը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, յերբ հրահանգի 15 հոդվածում մատնանշված միջոցները բավական չլինեն կամ Խորհուրդը բավական չհամարի ներգործելու համար Խորհրդի այս կամ այն անդամի վրա, վոր մեղավոր է իր պարտականությունները Խորհրդի հանդեպ սիստեմատիկաբար չկատարելու կամ այլ ավելի ծանր արարքներում, վոր Խորհրդի կարծիքով վայել չեն Գյուղական Խորհրդի անդամի կոչմանը։

18. Գյուղական Խորհրդի անդամներին Խորհրդի չըջանում կարելի յե ձերբակալել՝ միայն տեղեկություն տալով այդ մասին Գյուղական Խորհրդի նախագահությանը կամ նախագահին։

19. Գյուղական Խորհրդի անդամներն իրենց Խորհրդի վերաբերյալ պարտականությունները կատարում են ձրիաբար։

ՀԱՏՎԱԾ 3-ՐԴ

ԿԱՊ ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

20. Գյուղական Խորհրդի անդամները պարտավոր են պարզաբանել գյուղացիներին ու այլ աշխատավորներին Խորհրդի ձեռնարկած միջոցները։

21. Գյուղական Խորհրդի անդամները պարտավոր են գործոն մասնակցություն ունենալ գյուղի հասարակական կազմակերպությունների աշխատանքներում, աջակցելով Գյուղական Խորհրդին աշխատավորների լայն մասսաների գյուղատնտեսությունը հավաքական դարձնելու, գյուղական բնակչությունը կոոպերացիայի մեջ և պետություն կառավարելու մասնակցության գրավելու գործում։

22. Գյուղական Խորհրդի անդամները հաշվետու են ընտրողների առաջ իրենց գործունեության համար։

23. Գյուղական Խորհրդի անդամները կարող են ընդունել քաղաքացիներից ամեն տեսակ դիմումներ և գանգատներ Խորհրդի իրավասության վերաբերյալ գործերի առթիվ, սակայն իրավունք չունեն վոր և է կարգադրություն անելու իրենց կամ Խորհրդի անունից։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հաստատված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից 1926 թ. հունիսի 15-ին)

Ի զարգացումն Գյուղական Խորհուրդների սեկցիաների մասին կանոնադրության («Խ. Հ.» 1926 թ. № 86) Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը վորոշում է հաստատել հետևյալ

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գյուղական Խորհուրդների կոլեկտիվ աշխատանքները ուժեղացնելու և գյուղի ակտիվ ու առաջադեմ աշխատավոր գյուղացիներին և աշխատավորներին նրանց հասարակական գործունեության մասնակից դարձնելու նպատակով, համաձայն Կենտգործկոմի նախագահության 1926 թ. մարտի 30 վորոշման, Գյուղխորհուրդներին առընթեր կազմակերպվում են սեկցիաներ: Սեկցիաները իրենց գործունեությամբ զարկ պիտի տան աշխատավոր գյուղացիության մասսայական ինքնագործունեությանը և կազմակերպեն այդ ինքնագործունեությունը նոր և կատարելագործված միջոցներով՝ գյուղի հասարակական բարեկարգությունը բարձրացնելու նպատակով:

ՄԱՍ 1-ԻՆ

ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Սեկցիան Գյուղխորհուրդի խորհրդակցական և գործադիր մարմինն է և չի վայելում վարչական անորենության իրավունքներ. այդ տեսակետից սեկցիան՝

ա) Կատարում է խորհրդի բոլոր հանձնարարությունները և կիրարկվելիք վորոշումները.

բ) Խորհրդի հանձնարարությամբ նրա նիստերում քննելիք հարցերի վերաբերմամբ հավաքում է անհրաժեշտ նյութեր և տեղեկություններ, յենթարկում նախնական քննության և իր յեզրակացության հետ ուղարկում Գյուղխորհրդին ի տնորինություն.

գ) Կազմում է իր աշխատանքների ծրագիրը չահագրգռված հիմնարկությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ և իրագործում է ծրագիրը Գյուղխորհրդի կողմից հաստատվելուց հետո. ծրագրները կազմվում են յելնելով գյուղի առորյա պահանջներից և կարիքներից:

2. Սեկցիան կարիք յեղած դեպքում, բացի առաջին հոդվածում նախատեսված աշխատանքներից, կարող է ինքնաբերաբար քննության առնել ծրագրից դուրս իր աշխատանքի ասպարեզին վերաբերյալ զանազան ընթացիկ և հրատապ հարցեր և իր վորոշումները ներկայացնել Գյուղխորհրդին ի տնորինություն. այդ կողմից սեկցիան՝

ա) Հետևում և համապատասխան հիմնարկությունների և կազմակերպությունների ընթացիկ աշխատանքներին և թերություններ նկատելու դեպքում քննության և առնում, առանց միջամտելու նրանց ընթացիկ աշխատանքներին և իր յեզրակացության հետ հղում է Խորհրդին ի տնորինություն.

բ) Անհրաժեշտության դեպքում քննության և առնում համապատասխան հիմնարկությունների և կազմակերպությունների ընթացիկ աշխատանքներին ոժանդակություն ցույց տալու խնդիրները.

գ) Կարիք յեղած դեպքում լսում է տեղերը մեկնած մասնագետների զեկուցումները և իր աշխատանքների համար ստանում ցուցմունքներ:

3· Սեկցիան սիստեմատիկ և կոլլեկտիվ կերպով ծանոթանում և ուսումնասիրում է իր աշխատանքների ասպարեզին վերաբերյալ Խորհրդային իշխանության օրենքներն ու վորոշումները:

4· Սեկցիան իր նիստերին զբվելիք հարցերի քննությանը մասնակցելու համար հրավիրում է գյուղի կուլտուրական ուժերը խորհրդակցական ձայնի իրավունքով:

5· Սեկցիան կապ է պահպանում հարևան գյուղերի համապատասխան սեկցիաների հետ՝ նրանց աշխատանքների վարձին ծանոթանալու նպատակով:

6· Սեկցիան իր բոլոր վորոշումները կիրարկում է Խորհրդի կողմից հաստատվելուց և իրեն ի կատարումն հանձնելուց հետո:

ՄԱՍ 2-ՐԴ

ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.

1· Խորհրդի բոլոր անդամները պարտավոր են աշխատել սեկցիաներից վորևե մեկում իրենց ընտրությամբ. սեկցիաների վերջնական կազմը հաստատում է Խորհուրդը:

Ծանոթություն.—Բացառիկ դեպքերում Խորհրդի անդամը կարող է ազատվել սեկցիոն աշխատանքներից Խորհրդի վորոշմամբ վոր պիտի հաստատե գավառակային գործկոմը:

2· Սեկցիայի նախագահին ընտրում է Գյուղխորհուրդը:

3· Գյուղխորհուրդի հայեցողությամբ սեկցիայի մեջ մտնում են բացի Խորհրդի անդամներից նաև գյուղի հասարակական ժողովների և համապատասխան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները այն հաշվով, վոր նրանց ընդհանուր թիվը ավելի չլինի Խորհրդի ընտրած անդամների թվից:

Ծանոթություն.—Ներկայացուցիչների կեսն ընտրում են հասարակական ժողովները, իսկ մյուս կեսը նշանակում են համապատասխան հասարակական կազմակերպությունները. ներկայացուցիչների ընդհանուր քանակը վորոշում է Գյուղխորհուրդը:

4· Սեկցիաների նիստերը գումարվում են վոչ ուշ քան յերկու շաբաթը մեկ անգամ:

5· Սեկցիան իր աշխատանքների համար հատուկ ապարատ չունի. նա ոգտվում է Գյուղխորհրդի ապարատից:

6· Սեկցիայի անդամներն իրենց աշխատանքների համար հատուկ վարձատրություն չեն ստանում:

7· Սեկցիան իր նիստերի համար կազմում է արձանագրություն սահմանված ձևով:

8· Սեկցիան իր նիստերի արձանագրությունները կազմելու և ընդհանրապես այլ գրասենեկային տեխնիկական աշխատանքների համար ընտրում է իր միջից քարտուղար:

Ծանոթություն 1.—Սեկցիայում քարտուղարության համար հարմար անձ չլինելու դեպքում քարտուղարի պաշտոնը կատարում է Գյուղխորհուրդի քարտուղարը:

Ծանոթություն 2.—Սեկցիաներն իրենց արձանագրություններն և ընդհանրապես բոլոր գրությունները պահում են Գյուղխորհրդի գործերում:

9· Տասից ավելի անդամ ունեցող սեկցիաները (ներկայացուցիչների հետ միասին) իրենց ընթացիկ աշխատանքները վարելու համար ընտրում են յերեք հոգուց բաղկացած բյուրո, վորի կազմն է. նախագահ, քարտուղար և մի անդամ ժամանակ աշխատանքների համար:

10· Բյուրոն սեկցիայի գործադիր և ժամանակ մարմինն է և պատասխանատու է անմիջապես սեկցիայի առաջ:

11· Բյուրոն ունենում է իր նիստերը և կատարում հետևյալ աշխատանքները.

ա) մշակում է սեկցիայի նիստերում քննվելիք հարցերը, վորի համար հավաքում է անհրաժեշտ նյութեր և տեղեկություններ և ապա կազմում որակարգ.

բ) հրավիրում է սեկցիայի նիստերը և հետևում անդամների կանոնավոր հաճախելուն.

գ) կատարում է սեկցիայի բոլոր վորոշումներն ու հանձնարարությունները.

դ) կազմում է սեկցիայի աշխատանքների ծրագրի նախագիծ և ներկայացնում սեկցիայի նիստին ի քննություն:

12· Խորհրդին առընթեր կազմակերպվում են հետևյալ սեկցիաները—գյուղատնտեսական, կուլտուր-կրթական, շինարարական-սանիտարական և հասարակական կազմակերպություններին աջակցող։

ՄԱՍ 3-ՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.

Գյուղատնտեսական սեկցիան միջոցներ է ձեռք առնում լայն չափով նպաստելու գյուղական տնտեսության բարձրացման և նրա կոոպերացման գործին։ Այդ տեսակետից՝

1· Գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու և տնտեսավարության կատարելագործված ձևեր կիրառելու գործում, սեկցիան՝

ա) միջոցներ է ձեռք առնում և կազմակեպում է գյուղատնտեսական նորանոր գործիքներ ձեռք բերելու գործը.

բ) միջոցներ է ձեռք առնում վարձակալներից չքավոր գյուղացիներին տրամադրելու գյուղատնտեսական գործիքներ՝ ձրիաբար ողտագործելու համար.

գ) մասնագետ ուժերի միջոցով ծանոթացնում է գյուղացիներին գյուղատնտեսական նորանոր գործիքներին և միջոցներին.

դ) քննության է առնում գյուղատնտեսական գործիքների նորոգության վերաբերյալ հարցերը.

ե) լսում է գյուղատնտեսների զեկուցումներն իրենց կատարած աշխատանքների մասին և ստանում ցուցմունքներ.

զ) միջոցներ է ձեռք առնում մացնելու գյուղում հողի պարարտացման և մշակության նոր ձևեր. այդ նպատակով հաճախ խորհրդակցում է մասնագետ ույժերի հետ.

ը) հավաքում և կենտրոնացնում է իր մոտ այն բոլոր տվյալները, վորոնք վերաբերում են գյուղատնտեսական վիճակագրության։

2· Գյուղատնտեսական և անասնաբուժական կայաններ կազմակերպելու գործում, սեկցիան՝

ա) աջակցում է գյուղատնտեսական և անասնաբուժական

կայաններ կազմակերպելու գործին, իսկ յեթե այդպիսի կայաններ կան՝ ամեն կերպ աջակցում է նրանց աշխատանքներին.

բ) կայանների աշխատանքներին աջակցելու նպատակով լսում է նրանց աշխատակիցների և ուրիշ գյուղատնտեսների զեկուցումները և համապատասխան ցուցմունքներ ստանում.

գ) աշխատում է անասնաբուժական կայանների միջոցով կազմակերպել անասունների հիվանդությունների դեմ պայքարելու գործը.

դ) կատարում է համապատասխան վերադաս մարմինների հրահանգները կայանների աշխատանքներին ուժանդակություն ցույց տալու գործում։

ե) կայանների մասնագետ ուժերի միջոցով, գյուղացիների համար անասուններին կուլտուրական միջոցներով պահելու մասին հանրամատչելի զրույցներ, դասախոսություններ, ընթերցանություններ և ցուցադրական կերակրումներ է պատրաստում.

զ) ամեն կերպ աջակցում է գյուղական դպրոցների գյուղատնտեսական ամեն տեսակ ձեռնարկություններին։

3· Հողաշինարարական աշխատանքներին աջակցելու և դարկ տալու գործում, սեկցիան՝

ա) միջոցներ է ձեռք առնում ժողովրդականացնելու Հողային Ռեֆորմը

բ) աջակցում է ամեն կերպ գյուղում հողաշինարարական աշխատանքները դեկավարող պաշտոնյաների աշխատանքներին.

գ) լսում է հողաշինարարների զեկուցումները կատարվող աշխատանքների մասին և յեղած թերությունները վերացնելու համար ընդառաջ գնում.

դ) հողաշինարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտության դեպքում ստանում է մասնագետների ցուցմունքները, մշակում հողաշինարարության հետ կապված հարցերը և ապա միջնորդություն հարուցանում համապատասխան կենտրոնական մարմինների առաջ։

ե) հետևում է, վոր հողոգտագործումը կատարվի օրինական հիմունքներով։

4. Հաշվառության, ֆինհարկային և այլ գանձումների գործում սեկցիան՝

ա) կատարում է հարկահանության և ապահովագրության յենթակա իրերի, ցանքերի, անասունների հաշվառությունը և ամեն կերպ աջակցում իր տվյալներով ֆին և Պետապի մարմինների ներկայացուցիչների հաշվառության աշխատանքներին տեղերում.

բ) աջակցում է գյուղհարկային հանձնաժողովների բոլոր աշխատանքներին.

գ) աջակցում է համապատասխան մարմինների հարկերի ապառիկները գանձելու աշխատանքներին.

դ) աջակցում է գյուղմթասհարկի կամպանիաների բոլոր աշխատանքներին.

ե) աջակցում է պետապահովագրության ապահովագների գանձման աշխատանքներին:

5. Ցանքսերի պահպանության և սերմանման կամպանիաներ տանելու գործում, սեկցիան՝

ա) բացատրում է գյուղացիներին ցանքսերի և տունկերի ապահովագրության նշանակությունը և աշխատում է կամավոր կարգով բարձր գնով ապահովագրել տալ.

բ) կարկտահարության և անասունների հիվանդության ու սատկելու դեպքում հայտնում է ապահովագրական պատշաճ մարմիններին և կազմել է տալիս համապատասխան արձանագրություններ և մասնակցում է հանձնաժողովներում պարզելու և վորոշելու տարերային վնասների չափը.

գ) հետևում է, վոր գյուղացիների և ցուցադրական դաշտերի ցանքսերը անասունների վոտնահարությունից չփչանան. փչացնելու դեպքում միջոցներ է ձեռք առնում պարզելու վնասների չափը և որինական ընթացք տալու գործին.

դ) միջոցներ է ձեռք առնում վարել տալու դպրոցի անմշակ մնացած հողերը և հետևում վոր ըերքը հավաքվի ժամանակին. հսկում է դպրոցական ցանքսերի, ցուցադաշտերի, տունկերի կանոնավոր խնամելու վրա.

ե) մասնակցում է ցանքսի և սերմանման կամպանիաներին և ցույց է տալիս լայն աջակցություն.

զ) աջակցում է չքավոր տնտեսություններին գյուղատնտեսական գործիքներ և սերմացու ձեռք բերելու գործում. կարիք յեղած դեպքում չքավորների համար հարց է հարուցանում սերմացու ստանալու.

ը) հաշվի յե առնում չքավոր տնտեսությունները, նրանց կարիքները, ամեն կերպ նպաստում, վոր ցույց տրվի նրանց հարկավոր աջակցություն. անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հասարակական ոգնություն.

թ) քննում է և անհրաժեշտության դեպքում միջնորդություն հարուցանում չքավոր տնտեսություններին ազատելու պետապահովագրության ապահովագներից.

ժ) հետևում է, վոր ստացած սերմացուն կանոնավոր կերպով բաժանվի գյուղացիների մեջ.

ի) աջակցում է ամեն կերպ ծառեր տնկելու կամպանիաների աշխատանքներին:

6. Հողի վարձակալության և վարձու աշխատանքի կանոնավորմանն աջակցելու գործում, սեկցիան՝

ա) հետևում է և տամարագրել տալիս վարձու աշխատանքի բոլոր դեպքերը.

բ) հաշվի յե առնում գյուղից դուրս աշխատող վարձու այժերը. իսկ աշխատանք փնտրողների համար Խորհրդի միջոցով անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում.

գ) հետևում է, վոր հողի վարձակալության գործը տարվի գոյություն ունեցող որենքի սահմաններում.

դ) աջակցում է չքավոր ընտանիքներին կարիք յեղած դեպքում նպաստավոր պայմաններով վարձու տալու իրենց հողերը.

ե) կարիք յեղած դեպքում աջակցում է դպրոցական խորհուրդներին նպաստավոր պայմաններով վարձու տալու դպրոցական հողերը.

զ) վարձու աշխատանքից ոգտվողի և վարձու աշխատավորի միջև ծագած վեճերին որինական ընթացք և տալիս:

7. Աշխատավորական հողատատրության ասպարիզում, սեկցիան՝

ա) հետևում է, վոր ծխերին տրված հողերը չմնան անմշակ առանց հարգելի պատճառի (Հողային Որենսգիրք հոդ. 58).

բ) հսկում է, վոր հողի վարձակալության դեպքում որենքի խախտում չլինի (Հողային Որենսգիրք հոդ. 27 և 37).

գ) հսկում է համայնական և ազատ հողերի կանոնավոր ոգտագործության վրա.

դ) ամեն տարի կազմում է լքյալ գույքերի և հողերի լիակատար ցուցակ, կազմում է նրանց ոգտագործության ծրագիր և ներկայացնում է Գյուղխորհրդին.

ե) կազմում է հողն անխնա կերպով չահագործող և ուժասպառ անող ծխերի ցուցակը և Գյուղխորհրդի քննության է առաջարկում այդ ծխերի ժամանակավորապես կամ ընդմիշտ հողոգտագործման իրավունքից զրկելու խնդիրը (Հողային Որենսգրքի հոդ. 59).

զ) կազմում և Գյուղխորհրդի քննության է առաջարկում հասարակության սահմաններում գտնվող ազատ ու անմշակ հողերը (ճահճուտներ, զուեր և այլն) բարելավելու ծրագրեր:

8. Սեկցիան հսկում է ջրաբաշխության գործի կանոնավորման աշխատանքների վրա:

9. Աջակցում է այն բոլոր աշխատանքներին, վորոնք ձեռնարկվում են տեղերում գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքար մղելու համար:

10. Աջակցում է համապատասխան մարմինների անտառների պաշտպանության գործում և հսկում է, վոր այդ ասպարիզում կանոնների խախտումներ տեղի չունենան:

11. Բացի վերևում մատնանշված աշխատանքներից՝ սեկցիան կարող է կատարել այլ, տեղական պայմաններից բղխող աշխատանքներ, վորոնք նպաստելու են գյուղատնտեսության բարձրացման գործին:

ՄԱՍ 4-ՐԴ

ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կուլտուր-կրթական սեկցիան միջոցներ է ձեռք առնում բարձրացնելու գյուղացիության կուլտուրական և քաղաքական պատրաստության մակարդակը: Այդ տեսակետից՝

1. Անգրագիտության վերացման գործում, սեկցիան՝

ա) Հաշվի է առնում գյուղի 16–30 տարեկան հասակավոր անգրագետներին, աջակցում է հիմնելու նրանց համար լիկբեզներ և կիսագրագետների դպրոցներ.

բ) կազմակերպում է գյուղացության մեջ անգրագիտության վերացման ագիտացիա.

գ) ոգնում է Քաղլուսավորչության՝ գյուղում լիկբեզի և «Կորչի անգրագիտությունը» ընկերության կազմակերպման աշխատանքներին.

դ) վերահսկու է լինում լիկբեզները և կիսագրագետների դպրոցներն անհրաժեշտ պիտույքներով ապահովելու գործին:

2. Դպրոցական աշխատանքներին աջակցություն ցույց տալու գործում, սեկցիան՝

ա) տալիս է իր ներկայացուցիչը դպրոցական խորհրդին.

բ) աջակցում է դպրոցին իր ժամանակին ձեռք բերելու դասական և գրական պիտույքներ. միջոցներ է ձեռք առնում այդ պիտույքները ճրիտաբար մատակարարելու չքավոր աշակերտներին.

գ) միջնորդություն է հարուցանում կենտրոնի առաջ դպրոցական պիտույքներ հայթայթելու համար միջոցներ տրամադրելու.

դ) ուսումնական տարվա սկզբին շինսեկցիայի հետ միասին աշխատում է դպրոցի համար ձեռք բերել անհրաժեշտ ինվենտար, կարիք յեղած դեպքում վերանորոգել դպրոցական շենքը, հետևել կառուցվող շենքի ավարտելուն և անհրաժեշտության ու հնարավոր յեղած դեպքում միջոցներ ձեռք առնել նորերը կառուցելու.

ե) աջակցում է դպրոցա-անտեսական հանձնաժողովի ուսումնական տարվա սկզբին դպրոցն ապահովելու վառելափայտով.

զ) լսում է դպրոցների վարիչների զեկուցումները դպրոցի աշխատանքների մասին և ամեն կերպ աշխատում է վերացնել նկատված թերություններն ու դժվարությունները.

ը) հսկում է, վոր դպրոցական ֆոնդը գանձվի իր ժամանակին և գործադրվի հատկացումների համեմատ. [illegible] մի-

1003
73840

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ջոցներ և ձեռնարկում վորոնելու հատուկ ֆոնդի ուժեղացման նոր աղբյուրներ:

3· Մանկապարտեզներ, մանկական հրապարակներ և մուրներ կազմակերպելու գործում, սեկցիան՝

ա) կազմակերպում է գյուղացության համար զրույցներ մանկական հիմնարկությունների նշանակության մասին.

բ) կարիք յեղած դեպքում կազմակերպում է մանկական հիմնարկություններ զպրոցական խորհրդի ուժանդակությամբ.

գ) ամեն կերպ աջակցում է կենտրոնի կողմից գյուղում մանկական հիմնարկություններ կազմակերպելու համար նախաձեռնված աշխատանքներին և կարիք յեղած դեպքում այդ նպատակով կազմակերպում է հասարակական ոգնություն:

4· Խրճիթ-ընթերցարանների կազմակերպման, նրանց աշխատանքները կանոնավորելու և հասակավորների կուլտուրական ու քաղաքական զարգացման մակարդակը բարձրացնելու ասպարիզում, սեկցիան՝

ա) գյուղում խրճիթ-ընթերցարան չլինելու դեպքում ստեղծում է անհրաժեշտ պայմաններ (շենք, ինվենտար և այլ) և հարց. և հարուցանում համապատասխան մարմնի առաջ գյուղում խրճիթ-ընթերցարան հիմնելու մասին.

բ) տալիս է իր ներկայացուցիչը խրճիթ-ընթերցարանի խորհրդին և աջակցում է նրա աշխատանքները կանոնավոր հիմքերի վրա դնելուն. այդ նպատակով լսում է խրճիթ-ընթերցարանի և գրադարանի վարիչների զեկուցումները և ընդառաջում աշխատանքի թերությունները վերացնելու.

գ) կազմակերպում է խրճիթ-ընթերցարանում թերթի և գյուղատնտեսական, առողջապահական ու քաղաքական գրքույկների բարձրաձայն ընթերցանություններ.

դ) հոգ է տանում ձեռք բերելու խրճիթ-ընթերցարանի համար նոր գրականություն և թերթեր. հետևում է, վոր թերթերը ստացվեն կանոնավորապես.

ե) միջոցներ է ձեռք առնում ապահովելու խրճիթ-ընթերցարանի վառելիքը և լուսավորությունը.

զ) աշխատում է տարածել թերթերի բաժանորդագրությունը գյուղացության մեջ.

ը) կազմակերպում է ներկայացումներ և յերեկույթներ գյուղի կուլտուրական ուժերի հետ միասին.

թ) գյուղատնտեսական սեկցիայի հետ միասին կազմում է գյուղատնտեսական խմբակներ վորոնք նպատակ են դնում ծանոթանալ գյուղատնտեսական նորանոր ձևերին և միջոցներին մասնագետ ուժերի ղեկավարությամբ.

ժ) կազմակերպում է գյուղացության համար կուլտուրական ուժերի միջոցով բնագիտական զրույցներ.

ի) նշանակում է իր թղթակցին՝ պարբերաբար թղթակցելու «Մանկալ»-ին գյուղի առօրյա կարիքների մասին. հետևում է, վոր թղթակիցները բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները.

լ) գյուղում կազմակերպում է պատի լրագիր և առաջ քաշում ակտիվ գյուղացիներին թղթակցելու թերթին.

խ) ուժանդակություն և ցույց տալիս Շեֆիկոմի և շեֆրնկերությունների կողմից կատարվող բոլոր աշխատանքներին.

ծ) հաճախ ձեռակերպում և հարցեր է տալիս, խորհուրդներ է հարցնում «Մանկալ»-ից գյուղի առօրյա և հրատապ հարցերի մասին.

կ) խրճիթ-ընթերցարանների աշխատանքները կանոնավոր հիմքերի վրա դնելու համար ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ շինարարական և կազմակերպչական միջոցները:

ՄԱՍ 5-ՐԴ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Շինարարական-սանիտարական սեկցիան միջոցներ և ձեռք առնում զարկ տալու մի կողմից գյուղի շինարարական աշխատանքներին, իսկ մյուս կողմից բարձրացնելու նրա առողջապահական գրությունը՝ կռվելով հիվանդությունների դեմ և տարածելով գյուղացության մեջ առողջապահական գիտելիքները. այդ առնչակցից սեկցիան՝

1. Շենքեր կառուցանելու և վերանորոգելու գործում՝

ա) հաշվի է առնվում լքյալ շենքերը և միջոցներ ձեռք առնում այդպիսիները վերանորոգել տալու հասարակական կարիքների համար.

բ) միջոցներ է ձեռք առնվում վերանորոգել տալու գյուղի հիմնարկությունների և կազմակերպությունների բոնած շենքերը, ինչպես օրինակ, Գյուղխորհրդի, դպրոցի, խրճիթ-ընթերցարանի, կոոպերատիվի և այլն.

գ) աջակցում է գյուղական հիմնարկություններին և կազմակերպություններին անհրաժեշտ ինվենտար ձեռք բերելու գործում:

2. Ճանապարհներ, աղբյուրներ և կամուրջներ շինելու և վերանորոգելու գործում, սեկցիան՝

ա) նախաձեռնում է աղբյուրներ անցկացնելու, ճանապարհներ և կամուրջներ շինելու աշխատանքները գյուղացության ուժանդակությամբ.

բ) աջակցում է և կազմակերպում հասարակական ոգնություն կենտրոնի նախաձեռնած բոլոր շինարարական աշխատանքներին.

գ) կամուրջների, առուների և ճանապարհների փչանալու դեպքում միջոցներ է ձեռք առնում վերանորոգելու.

դ) լսում է շինարարական աշխատանքները ղեկավարող մասնագետների զեկուցումները կատարվող աշխատանքների մասին և թերությունները վերացնելուն ընդառաջ գնում.

ե) լսում է մասնագետների զեկուցումը գյուղում կատարվելիք անհրաժեշտ աշխատանքների մասին և ըստ այնմ նախաձեռնում անհրաժեշտ շինարարական աշխատանքներ:

3. Առողջապահական և սանիտարական դրությունն ապահովելու գործում սեկցիան՝

ա) հսկում է գյուղի փողոցների, ճանապարհների, հրապարակների, առուների, աղբյուրների, ջրերի և այլն մաքրության վրա և հասարակության հավանությամբ ու նրա ուժերով մաքրել և տալիս այդպիսիները.

բ) միջոցներ է ձեռք առնում գյուղում կամ նրա շրջակայքում գտնվող ճահիճները չորացնելու համար.

գ) հսկում է գյուղացիների տների և բակերի սանիտարական դրության վրա, մաքրել է տալիս կեղտոտ բակերը, շինել է տալիս բակերում արտաքնոցներ և աղբարկղներ, հետևելով վերջինների ժամանակին դատարկելուն և հատկացնելով գյուղից դուրս վորոշ տեղ աղբը թափելու համար.

դ) հասարակության հավանությամբ և շինսեկցիայի մասնակցությամբ միջոցներ է ձեռք առնում գյուղում բաղնիքներ կառուցանելու կամ յեղածները վերանորոգելու համար.

ե) ցույց է տալիս լայն աջակցություն բժշկա-սանիտարական հիմնարկություններին և մարմիններին, զանազան սոցիալական, կենցաղային և վարակիչ հիվանդությունների դեմ գյուղում մղվող պայքարի գործում.

զ) հսկում է շուկայի, վարսավիրանոցների, խանութների, մասնավորապես ուտեստի մթերքների հետ գործ ունեցողների սանիտարական դրության, ինչպես և վաճառվող սննդամթերքների վորակի վրա.

ը) հսկում է հասարակական հիմնարկությունների (Գյուղխորհուրդ, դպրոց, խրճիթ-ընթերցարան, կոոպերատիվ) առողջապահական դրության վրա, կազմակերպում նրանցում մաքրություն պահպանելու գործը.

թ) հետևում և հսկում է, վոր սանիտարական պարտադիր վորոշումները լիովին կիրարկվեն կյանքում.

ժ) կատարում է բարձր մարմինների համապատասխան հրամանները և կարգադրությունները.

ի) կազմակերպում է սանիտարական բնույթ կրող հասարակական գրույցներ, լայն աջակցություն և ցույց տալիս այդ գործում բժշկա-սանիտարական հիմնարկություններին և մարմիններին, հոգ է տանում խրճիթ-ընթերցարանի մասին.

լ) վերահսկում է լինում գյուղի բնակարանային-շինարարական, գյուղի նոր հատակագծման ծրագրի մշակելուն և համապատասխան մարմինների ու մասնագետների ոգնությամբ աջակցում է նոր շինարարության ժամանակ սանիտարական պահանջների կիրառելուն.

ի) կատարում է շրջանային բժշկի հրահանգները շրջանի առողջապահության գործի մասին և տանում է նրանից ցուցմունքներ յուր աշխատանքների համար։

ՄԱՍ 6-ՐԴ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՍԵԿՑԻԱՅԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Հասարակական կազմակերպություններին աջակցող սեկցիան ամեն կերպ աջակցում է հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, նպատակ ունենալով գործի տալ կոլլեկտիվ արտեսավարության ձևերին և գյուղական հասարակականության ամրացման։ Այդ տեսակետից սեկցիան՝

1. Փոխադարձ Ոգնության Կոմիտեների աշխատանքներին աջակցելու գործում.

ա) ամեն կերպ ընդառաջում է ՓՈԿ-ի կողմից հասարակական ցանքսեր կազմակերպելու գործին կամ ինքն այդ ուղղությամբ հարց և հարուցանում ՓՈԿ-ի առաջ.

բ) ընդառաջ է գնում ՓՈԿ-ի սերմացուի պահեստի ֆոնդեր կազմակերպելու գործին.

գ) լսում և ՓՈԿ-ի տեղեկատու զեկուցումները հասարակական ցանքսեր կազմակերպելու առպարիզում կատարած աշխատանքների մասին.

դ) աջակցում է ՓՈԿ-ին իր հաշվեմատությունները կանոնավորելու գործում.

ե) աջակցում է ՓՈԿ-ի նախաձեռնած շինարարական բոլոր աշխատանքներին.

զ) աջակցում է ՓՈԿ-ին գյուղացության չքավոր տարրերին, կարմիր գինվորների ընտանիքներին, հաշմանդամներին նյութապես ապահովելու և նրանց տնտեսություններ բարձրացնելու բոլոր աշխատանքներին.

ը) աջակցում է ՓՈԿ-ին գյուղացության մեջ ինքնագործունեության և փոխադարձ ոգնության գործի կազմակերպման բոլոր աշխատանքներին.

2. Գյուղատնտեսական Ընկերությունների և արտելների աշխատանքներին աջակցելու գործում սեկցիան՝

ա) գյուղատնտեսական և սպառողական կոոպերատիվներ, արտելներ չլինելու դեպքում նախապատրաստական աշխատանքներ է կատարում՝ կազմակերպում է զրույցներ, անդամագրում է գյուղացիներին, միջոցներ ձեռք առնում և այլն.

բ) ոգտագործում է գյուղատնտեսական կայանների և շրջանային մասնագետ ուժերը գյուղատնտեսական կոոպերատիվների, ընկերությունների և արտելների աշխատանքները կանոնավորելու նպատակով.

գ) աջակցում է գյուղկոոպերատիվներին ու կոլլեկտիվներին յերկրագործական աշխատանքներ կատարելու և յերկրագործական ձեռնարկություններ (արհեստանոց, սերմացուի կայան, գյուղգործիքների պահեստ և այլն) կազմակերպելու առպարիզում.

դ) միջոցներ է ձեռք առնում դյուրացնելու գյուղացության չքավոր տարրերի անդամագրությունը, վորոնելով այդ նպատակով վայավճարների հատուկ աղբյուրներ.

ե) աջակցում է կոոպերատիվներին կուլտուրաների կազմակերպման ու ցանքսերի (բամբակի, այդինների, ծխախոտի, դեղաբույսերի և այլն) կամպանիաներ տանելու աշխատանքներին.

զ) կազմակերպում է խրճիթ-ընթերցարաններում և ակումբներում գյուղկոոպերացիայի նշանակության մասին հանրամատչելի զրույցներ, ընթերցանություններ և միջոցներ ձեռք առնում տարածելու գյուղացիների մեջ համապատասխան գրականություն.

ը) լսում է գյուղկոոպերատիվների, արտելների տեղեկատու զեկուցումները և թերություններ նկատելու դեպքում՝ նրանց վերացնելուն ընդառաջ գնում.

թ) աջակցում է գյուղկոոպերատիվներին և արտելներին չարաշահությունների և գեղծարարությունների դեմ կռվելու գործում։

3. Վարկային կոոպերացիայի աշխատանքներին աջակցելու գործում, սեկցիան՝

ա) ամեն կերպ աջակցում է չքավոր և միջակ գյուղացիներին անդամագրելու վարկային ընկերություններում.

ը) կազմակերպում է գրույցներ վարկային ընկերությունների դերի և նշանակության մասին և այդպիսով ուժեղացնում գյուղացիների անդամագրությունը.

դ) տալիս է իր յեզրակացությունը գյուղացիներին վարկ բանալու համար.

զ) հետամուտ է լինում, որ վարկային ընկերությունների միջոցները բաշխվեն նպատակահարմար կերպով և որ առհասարակ իրենց գործունեության ընթացքում ղեկավարվեն գյուղատնտեսական վարկի մասին յեղած որենքներով և կանոններով.

է) աջակցում է վարկային ընկերություններին՝ տված վարկը նպատակին ծառայեցնելու և վարկն իր ժամանակին վերադարձնելու գործում.

ը) աջակցում է վարկային մարմիններին՝ գյուղատնտեսական վարկի գաղափարները գյուղական լայն մասսաների մեջ տարածելու գործում.

ը) աջակցում է գյուղի պետական և հասարակական կազմակերպություններին, այլ և անհատ գյուղացիների տրամադրության տակ յեղած գումարներն, վարկային ընկերություններին իբրև ավանդ մուծելու գործին.

թ) խորհրդի միջոցով իրազեկ է պահում կենտրոնական վարկային մարմիններին այն բոլոր դժգոհությունների մասին, որոնք հաճախ լինում են գյուղացության կողմից վարկային ընկերությունների գործունեության վերաբերմամբ:

4. Սպառողական կոոպերացիայի աշխատանքներին աջակցելու գործում, սակայն՝

ա) լսում է կոոպերատիվ վարչության տեղեկատու զեկուցումները և թերություններ հայտնաբերելու դեպքում ընդառաջում է այդպիսիները վերացնելու.

բ) տեղյակ է պահում խորհրդի միջոցով կոոպերատիվի կենտրոնական մարմիններին գյուղական կոոպերատիվ կազմակերպության պակասությունների և գյուղացության նկատված դժգոհությունների մասին.

գ) աջակցում է կոոպերատիվ կամպանիաներ տանելու բոլոր աշխատանքներին.

դ) մասնակցում է կոոպերատիվի վարչության նիստերին իր ներկայացուցիչների միջոցով՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

ե) աջակցում է կոոպերատիվի անդամագրությունը ուժեղացնելու և միջոցներ է ձեռք առնում գյուղացության չքավոր տարրերին ՓՈԿ-ի միջոցով անդամագրելու համար:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՏՈՒՊԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

(Հաստատված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից 1926 թ. ապրիլի 20-ին)

1. Գյուղական Խորհուրդների կանոնադրության (Հ.Ս.Խ.Հ. Ող. և Կարգ. Ժողովածու, 1925 թ. № 9) 21 հոդվ. հիման վրա Գյուղական Խորհուրդներին կից կազմվում են վերատուգիչ հանձնաժողովներ:

2. Վերատուգիչ հանձնաժողովը, վոր Գյուղական Խորհրդի ֆինանսական-տնտեսական գործունեության հասարակական վերահսկողության մարմինն է, ընտրում է ընտրող քաղաքացիների ընդհանուր ժողովը Գյուղական Խորհրդի ընտրության հետ միաժամանակ և միևնույն կարգով, վոր սահմանված է Գյուղական Խորհուրդների ընտրության համար:

3. Վերատուգիչ հանձնաժողովն ընտրվում է Գյուղական Խորհրդի լիազորությունների տևողության ժամանակով, յերեք անդամի և յերկու փոխ-անդամի կազմով:

4. Վերատուգիչ հանձնաժողովն իր միջից ընտրում է վերատուգիչ հանձնաժողովի մշտական նախագահ և քարտուղար:

5. Վերատուգիչ հանձնաժողովն ատանձին տեխնիկական ապարատ չունի և հարկավոր յեղած դեպքում իր գործունեության համար ոգտվում է Գյուղական Խորհրդի ապարատից:

6. Գյուղական Խորհրդի վերատուգիչ հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել խորհուրդների ընտրության իրավունք վայելող ամեն մի քաղաքացի, ոգամարդ կամ կին:

Ծանոթություն.—Վերատուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել համապատասխան Գյուղական Խորհրդի անդամները ու փոխանդամները, այլ և ավյալ վերատուգիչ հանձնաժողովի վերահսկողության յենթակա հիմնարկությունների պաշտոնյաները:

7. Վերատուգիչ հանձնաժողովի անդամները կարող են հեռացվել իրենց պորտից ընտրող քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշմամբ, իսկ մինչև ընդհանուր ժողով գումարելը՝ գավառական գործադիր կոմիտեյի վորոշմամբ, գավառակային գործադիր կոմիտեյի առաջարկությամբ—ա) իրենց պարտականություններին ակնհայտանի անփութությամբ վերաբերվելու դեպքերում և բ) վերատուգումների ժամանակ չարաշարություններ թույլ տալու դեպքերում:

Ծանոթություն.—Վերատուգիչ հանձնաժողովի ամեն մի հեռացող անդամին փոխարինում է փոխ-անդամը:

8. Վերատուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար վոչ մի վարձատրություն չեն ստանում:

9. Վերատուգիչ հանձնաժողովը՝ ա) ստուգում և դրամական միջոցներ ստանալու, պահելու և ծախսելու կանոնավորությունը, այլ և վերահսկողություն է անում Գյուղական Խորհրդի այլ գույքը (հրչիջության պատկանելիքները, հողագործության հանրային գործիքները, ինվենտարը, խրճիթ-ընթերցարանները և այլն) նպատակահարմար և կանոնավոր կերպով պահելու ու ոգտագործելու, բ) ստուգում է Գյուղական Խորհրդի դրամական և նյութական հաշվեհավությունը և նրա տեսչության տակ գտնվող ձեռնարկությունների (դարբնոցների, ջրաղացների և այլն) ֆինանսական-տնտեսական գործունեությունը, գ) ստուգում է Գյուղական Խորհրդի տեսչության տակ գտնվող ձեռնարկությունների գործունեությունը, այլ և պարզում է թե ինչպես և գործը զբաղված այդ ձեռնարկություններում և նախագծում է գործը բարելավելու միջոցներ, դ) ստուգում է սահմանված կարգով տուրքերի հանգանակության և հանգանակած գումարների ծախսելու կարևորությունը և հաշիվ է տալիս այդ մասին գյուղացիների ընդհանուր ժողովին, ե) ստուգում է Գյուղական Խորհրդի հանձնաժողովների և սեկցիաների աշխատանքը, նմանապես հողային հասարակությունների ֆինանսական-տնտեսական գործունեությունն այնտեղ, ուր այդ հասարակու-

թյունների սահմանները զուգադիպում են Գյուղական Խորհուրդների շրջաններին, գ) ստուգում է գյուղական բյուջեյով պահվող հիմնարկությունների ֆինանսական-տնտեսական գործունեությունն, ուր վոր այդպիսի բյուջե մացրած է, նմանապես տեղական այլ գործադիր կոմիտեների բյուջեյով պահվող հիմնարկությունները՝ այդ կոմիտեների հանձնարարությամբ:

10. Յեթե վերստուգիչ հանձնաժողովը յերևան հանե, վոր դրամ է վատնված, ապօրինի ու անկանոն ծախս է արված, կամ այլ զեղծումներ են տեղի ունեցել, այդ մասին պիտի հայտնե գավառակային գործադիր կոմիտեին և Գյուղական Խորհրդին, այլ և գեկուցանե քաղաքացիների առաջիկա ընդհանուր ժողովին:

11. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովը հերթական վերստուգումներ և կատարում առնվազն յերեք ամիսը մի անգամ: Արտակարգ վերստուգումներ տեղի յեն ունենում թե՝ գյուղական վերստուգիչ հանձնաժողովների նախաձեռնությամբ և թե՝ վերադաս գործադիր կոմիտեների առաջարկությամբ:

12. Նախորդ հոդվածներում մատնանշված կարգով Գյուղական Խորհրդի գործունեության ստուգումը պիտի կատարվի անպատճառ Գյուղական Խորհրդի վերընտրությունից մի ամիս առաջ: Նորընտիր վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ներկա լինել նորընտիր Գյուղական Խորհրդի նախկին գյուղական խորհրդից գործերը, դրամական գումարներն ու ձեռնարկություններն ընդունելիս:

13. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքի մասին հաշիվ և տալիս ընտրողներին, քաղաքացիների ընդհանուր ժողովներում, ամեն անգամ, յերբ Գյուղական Խորհուրդը գեկուցումն և տալիս իր գործունեության մասին:

Ծանոթություն.—Գյուղական Խորհրդի տնօրենության տակ չգտնվող հիմնարկությունների (հոդ. 9 կետ «գ») վերստուգման արդյունքը վերստուգիչ հանձնաժողովը հաղորդում է գավառակային գործադիր կոմիտեին, այլ և պաշտ գեպքերում այն գործադիր կոմիտեին, վորի հանձնարարությամբ վերստուգումը կատարվել է:

14. Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգումն կատարելիս պարտավոր է ամեն անգամ արձանագրություն կազմել յերեք օրինակ: Արձանագրության մեջ անհրաժեշտ է վորքան կարելի յե մանրամասն մատնանշել, թե ի՞նչ է ստուգվել, ի՞նչ է յեղել ստուգման արդյունքը և թե ի՞նչ է առաջարկում անել վերստուգիչ հանձնաժողովը նկատված թերությունները վերացնելու համար: Արձանագրությունը պետք է ստորագրեն վերստուգիչ հանձնաժողովի բոլոր անդամները, վորոնք կատարել են վերաստուգումը, Գյուղական Խորհրդի նախագահը, կամ նրան փոխարինող անդամը. արձանագրության մի օրինակը մնում է վերստուգիչ հանձնաժողովի գործերում, յերկրորդը՝ Գյուղական Խորհրդի գործերում և յերրորդն ուղարկվում է գավառակային գործադիր կոմիտեին:

15. Վերստուգումը կատարվում է ավյալ հիմնարկությանը և ձեռնարկությանը ղեկավարող անձանց կամ նրանց փոխարինողների ներկայությամբ: Յեթե վերստուգիչ հանձնաժողովի անդամներից կամ վերաստուգմանը ներկա յեղողներից մեկը համաձայն չլինի արձանագրությանը, նրան իրավունք է վերապահվում յերեք որվա ընթացքում իր առանձին կարծիքը մացնելու արձանագրության մեջ:

Ծանոթություն.—Յեթե վերոհիշյալ անձանց ներկայությունը միանգամայն անհնար լինի, վերստուգումը պիտի կատարվի յերկու ընթերակայի ներկայությամբ:

16. Յեթե ավյալ Գյուղական Խորհրդի շրջանում հոդ. 9-ի «գ» կետի համաձայն գտնվող հիմնարկությունների վերաստուգումը կատարելու լինին վերադաս վերստուգիչ մարմինները, վերստուգմանը մասնակցելու պետք է հրավիրվի համապատասխան գյուղական վերստուգիչ հանձնաժողովի անդամներից մեկը:

17. Գյուղական Խորհրդի վերստուգիչ հանձնաժողովի առաջարկություններին անհամաձայն լինելու դեպքում տարակարծությունները լուծում է գավառակային գործադիր կոմիտեն:

18. Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում կատարելիս կարող է կանչել բացատրություն տալու համար գյուղական պաշտոնյաներին, նայել Գյուղական Խորհրդի բոլոր մատյաններն ու փաստաթղթերը:

Աշխատանքի համապատասխան ճյուղերն հետազոտելիս վերստուգիչ հանձնաժողովը կարող է հրավիրել իրեն ոգնելու համար դիտակ անձանց (բժիշկների, գյուղատնտեսների, հաշվապահների և այլն) տեղական աշխատակիցներից:

19. Վերատուգիչ հանձնաժողովի անդամները կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնի իրավունքով համապատասխան գյուղական խորհրդի բոլոր նիստերին: Վերատուգիչ հանձնաժողովի նախագահի ներկայությունը խորհրդի բոլոր նիստերին պարտադիր է:

20. Գյուղական վերատուգիչ հանձնաժողովները ղեկավարում ու հրահանգում են գավառակային գործադիր կոմիտեները:

21. Գյուղական Խորհուրդն իրավունք չունի միջամտելու վերատուգիչ հանձնաժողովի գործունեությանը և վորևե կարգադրություն տալու նրան: Սակայն կարող է հանձնարարություններ անել վերատուգիչ հանձնաժողովին այս կամ այն աշխատանքի վերատուգման մասին:

22. Վերատուգիչ հանձնաժողովն իրավունք չունի միջամտելու Գյուղական Խորհրդի, այլ և նրան յենթակա հիմնարկությունների ու ձեռնարկությունների ընթացիկ գործունեությանը:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* S.S.R.A. Republican Library *
7/II-1922
ԱՄՍԵՐԱ, Ереван
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

Եջ

Ա. ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 3

1. Ընդհանուր հիմունքներ 3
2. Գյուղական Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի և նրա սեկցիաների աշխատանքներին . . 4
3. Կապ տեղական բնակչության հետ 7

Բ. ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 8

1. Սեկցիաների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները 9
2. Սեկցիաների կազմակերպությունը 10
4. Կուլտուր-կրթական սեկցիայի անելիքները . . . 16
3. Գյուղատնտեսական սեկցիայի անելիքները . . . 12
5. Շինարարական-սանիտարական սեկցիայի անելիքները 19
6. Հասարակական կազմակերպություններին աջակցող սեկցիայի անելիքները 26

Գ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ 24

ՀՀ Ազգային գրադարան
NL0220757

40.159